Ոչ պաշտոնական հրապարակում
«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ
www.taxpayers.am, info@taxpayers.am

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Վ. Գաբրիելյան

18 օգոստոս 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ
Գ. Խաչատրյան

14 օգոստոս 2012 թ. N 22

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ո Ւ Մ N 22

«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի Ց ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի հունիսի 22-ի ՀՕ-166-Ն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հուլիսի 1-ից: Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո նախկինում ստացված արտոնագրերի համար վճարված արտոնագրային վճարների գումարների վերահաշվարկներ չեն կատարվում:»:

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (22.06.2012թ. ՀՕ-166-Ն) հրապարակվել է 2012 թվականի հուլիսի 11-ին «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» N 33(907) համարում:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 87-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N 1007-Ն որոշմամբ հաստատված՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրման կարգի 6-րդ կետով՝ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (22.06.2012թ. ՀՕ-166-Ն) ուժի մեջ մտնելու հետ կապված ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

1. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (22.06.2012թ. ՀՕ-166-Ն) դրույթները տարածվում են 2012 թվականի հուլիսի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

2. Եթե իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) N 7 հավելվածով սահմանված գործունեության տեսակների համար արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությունը ներկայացրել է 2012 թվականի հուլիսի 1-ից հետո և այդ հայտարարության համաձայն գործունեության իրականացման սկիզբ է համարվում 2012 թվականի հուլիս ամիսը, ապա այդ հայտարարությունում նշված ժամանակահատվածի համար արտոնագրային վճարի չափը հաշվարկվում է «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (22.06.2012թ. ՀՕ-166-Ն) սահմանված դրույքաչափերով:

3. Օրենքի N 7 հավելվածով սահմանված գործունեության տեսակների համար մինչև 2012թ. հունիսի 30-ը ներկայացված արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությունների հիման վրա արտոնագրային վճարների չափերը հաշվարկվում են մինչև 2012 թվականի հուլիսի 1-ը գործող կարգին համապատասխան:

4. Մինչև 2012 թվականի հուլիսի 1-ը ստացված արտոնագրերի մասով 2012 թվականի հուլիսի 1-ից հետո ելակետային տվյալի ավելացման դեպքերում Օրենքի N 8 հավելվածի 8-րդ կետին համապատասխան լրացուցիչ վճարման ենթակա արտոնագրային վճարը հաշվարկվում է 2012 թվականի հուլիսի 1-ից հետո գործող դրույքաչափերով: